Կարծիք

Ֆաթեմի Սեյեդեհնասիմ Սայեդմոջթաբայի «Նոր բողոքականության տարածումը Հայաստանի եզդիների շրջանում և ինքնության տրանսֆորմացիաները» խորագրով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ:

Աշխատանքում քննության է առնվել վերջին մի քանի տասնամյակի ընթացքում եզդիների շրջանում Եհովայի վկաներ, Հիսուսականներ, Խարիզմատիկներ կրոնական ուղղությունների տարածման գործընթացը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից, եզրակացություններից, գրականության ցանկից և լուսանկարների հավելվածից:

Ներածության մեջ ներկայացվում է թեմայի հետազոտության համառոտ պատմությունը, նպատակները, խնդիրները, մեթոդաբանությունը, նկարագրվում են կրոնափոխ եզդիների շրջանում դաշտային աշխատանքներ կատարելու ժամանակ հաղթահարած մարտահրավերները և մի շարք բանասացների ցուցաբերած աջակցությունը: Նախաբանում նաև հակիրճ անդրադարձ է կատարվում եզդիների ծագման, նրանց լեզվի և կրոնի հարցերին, ինչը շատ կարևոր է, քանի որ թեմային անծանոթ ընթերցողը նախնական պատկերացում է կազմում նյութի վերաբերյալ:

Աշխատանքի առաջին գլխում նկարագրվում են կրոնափոխ եղած եզդիների ներկայացված այն պատճառները, որոնք նպաստել են նոր կրոն ընդունելուն և նոր ինքնության ձեռքբերմանը: Այստեղ նկարագրվում են տարբեր կրոնական ուղղությունների հետևորդ դարձած եզդիական խմբերի հարաբերություններն ու վերաբերմունքը միմյանց նկատմամբ, նոր ստեղծված համայնքներում ինքնության հարցերն ու կենցաղային որոշ առանձնահատկություններ:

Աշխատանքի երկրորդ գլխում ներկայացվում է վերոնշյալ կրոնական ուղղությունների կողմից իրականացվող քարոզչության ռազմավարությունն ու մեթոդները: Քննարկվում է, թե ինչպես են սկզբից եզդիների շրջանում քարոզ իրականացնում հայերը հայերենով, հետո եզդիների լեզվին տիրապետող հայեր են քարոզում, ապա ժամանակի ընթացքում կրոնափոխ եզդիների շարքերից ընտրվում և պատրաստվում են եզդի քարոզիչներ: Նկարագրվում է քարոզիչներին կրթելու և նախապատրաստելու ճանապարհը, դրա համար օգտագործվող գրականությունը: Այս գլխում ներկայացվում են նաև քարոզիչների համոզելու հմտությունները, հոգեբանորեն ներազդելու ձևերը, արտասահմանում ապրող կրոնափոխ եզդիների կապերը հայաստանաբնակ եզդիների հետ:

Աշխատանքի երրորդ գլխում նկարագրվում են նոր կրոն ընդունած եզդիների որոշ տոներ, ծեսեր ու արարողություններ (օրինակ՝ Հիսուս Քրիստոսի մահվան երեկո, Հարության տոն՝ Զատիկ, Ծնունդ և մկրտություն և այլն). հընթացս ներկայացվում են այն եզդիական արարողությունները, որոնցից կրոնափոխ եղած շատ եզդիներ չեն կարողացել հրաժարվել: Այստեղ հակիրճ անդրադարձ է կատարվում եզդիական

ավանդական հարսանիքին, ավանդական թաղման ծեսին, ապա ներկայացնում են նոր կրոն ընդունած եզդիների հարսանեկան արարողություններում, թաղման ծեսում տեղի ունեցած վերափոխումները:

Աշխատանքի չորրորդ գլխում ներկայացվում են դավանափոխ եղած եզդիների փոխհարաբերությունները, շփումները ավանդական եզդիական համայնքի հետ: Քննարկվում են կրոնափոխ լինելուց հետո կանանց ձեռք բերած որոշ նոր գործառույթներ և պարտավորություններ, ինչպես օրինակ՝ քարոզ անելը, այլ կանանց և տղամարդկանց հետ միասին Աստվածաշունչ ուսումնասիրելը, քարոզ վարելու համար նոր լեզուներ սովորելը, իրենց ամուսիններին և իրենց ընտանիքների տղամարդկանց կրոնափոխության մղելն ու «դարձի բերելը»: Այստեղ քննության է առնվում նաև կրոնափոխ եղած եզդիների հագուստի, ուտեստների վերափոխման, եզդիական կրոնի որոշ տաբուների վերացման և նոր կենսաձևի հարցերը:

Աշխատանքի վերջում ներկայացված են եզրակացությունները, օգտագործված գրականության ցանկը և հավելվածը:

Պետք է արձանագրենք, որ ատենախոսությունը զերծ չէ թերություններից և վրիպակներից: Աշխատանքում տեղ են գտել որոշ անհարթություններ և ոչ միանշանակ ձևակերպումներ:

Օրինակ՝ մի քանի տեղ կիրառվում է *քուրմանջի* (էջ 14, 19, 47, 66), մինչդեռ գերադասելի է կիրառել *կուրմանջի* ձևը:

Աշխատանքի երրորդ գլխում նշվում է. «Ավանդական եզդիները ծոմն անվանում են ռուզե» (էջ 86): Եզդիները ծոմն անվանում են *ռոժի* (rojî), իրանցիներն են ծոմը *ռուզե* կոչում (թեպետ երկու բառն էլ նույն ծագումն ունեն):

Լավ կլիներ, որ հեղինակը խուսափեր ոչ միանշանակ և խնդրահարույց պնդումներից և ձևակերպումներից: Օրինակ՝ «Ինչպես արդեն նշել ենք, եզդիական ավանդական համայնքում հասարակ ժողովուրդը՝ մրիդները, հարստահարվում են շեյխերի և փիրերի կողմից» (էջ 45): Նման պնդում կատարելու դեպքում հարկավոր էր հիմնավորել կամ ներկայացնել հոգևորականների կողմից եզդիների հարստահարման դեպքեր: Եզդիները ավելի քիչ գումար են նվիրաբերում շեյխերին և փիրերին, քան հիսունականը տասանորդ է տալիս իր եկեղեցուն, ուստի եզդի հոգևորականի կողմից եզդիների հարստահարման մասին պնդումը այնքան էլ համոզիչ չի հնչում:

Մեկ այլ տեղ ասվում է. «Եհովայի վկա դարձած իմ զրուցակից եզդիների մի զգալի մասը կրոնափոխ է դարձել, որ տեսնի իր մահացած հարազատների վերադարձը, մինչդեռ, ըստ եզդիզմի՝ մահացածները հարություն չեն առնում» (էջ 27): Այստեղ հարկ էր նաև նշել, որ եզդիների շրջանում էլ կա հոգու անմահության գաղափարը, պարզապես կրոնափոխված բանասացը տեղյակ չի եղել այդ մասին ոչ իր կրոնափոխությունից առաջ և ոչ էլ դրանից հետո:

Ատենախոսության չորրորդ գլխում հանդիպում է հետևյալ պնդումը . «Ավանդական եզդիների համար արյունը խմբային ինքնության հիմնարար տարր է

համարվում: Արյան փոխներարկման անհրաժեշտության դեպքում՝ եզդիներն օգտվում են բացառապես իրենց հայրենակիցների արյունից, որպեսզի եզդիական արյունը չխառնվի ուրիշ ազգերի արյան հետ: Նրանք նաև իրենց արյունը չեն տալիս ուրիշ ազգի ներկայացուցիչներին (նույնիսկ խիստ անհրաժեշտության դեպքում)» (էջ 122-123): Ճիշտ է եզդիները խուսափում են այլակրոնների հետ խառնամուսնություններից, բայց եզդիական կրոնում չկա արյան փոխներարկման արգելք. հետևաբար նման պնդում կատարելու դեպքում հարկավոր է հիմնավորել այն կամ նշել աղբյուրը:

Աշխատանքի առաջին գլխում նշվում է. «Ըստ եզդիական ավանդույթի՝ կանայք և աղջիկներն իրավունք չունեն շփվելու անծանոթ տղամարդկանց հետ: Որոշ դեպքերում, ինչպես նշում են եզդի կանանց մեծամասնությունը, նրանք զրկված են նույնիսկ սեփական երեխաներին դաստիարակելու իրավունքից (տան հարսն իր երեխաներին միայնակ դաստիարակելու իրավունք չունի: Այդ իրավունքը պատկանում է ընտանիքի տարեցներին): Մինչդեռ, ընդունելով Եհովայի վկաների և Հիսուսականների կրոնը, եզդի կանայք ձեռք են բերում ազատ շփվելու, քարոզելու և որոշումներ կայացնելու իրավունք» (էջ 28): Եզդիական նման ավանդույթ չկա: Եզդիական համայնքը հաճախ բնակվելով թշնամաբար տրամադրված հարևանների կողքին՝ ստիպված է եղել ինքնապաշտպանական նկատառումներով լինել ավելի փակ, մինչդեռ համայնքի ներսում կանայք ունեցել են իրենց ուրույն դերը և եղել են բավական ազատ (տե՛ս Ամրյան Թ. , *Եզդիական կրոնական համակարգում կանանց դերի որոշ առանձնահատկությունների շուրջ,* Բանբեր Մատենադարանի, № 27, Երևան, 2019, էջ 388-400): Եզդիական համայնքում կանանց վարքի որոշ առանձնահատկություններ (օրինակ՝ տղամարդկանց հետ միասին սեղան չնստելը, հարսների չխոսկան լինելը և այլն) միայն եզդիական համայնքի մենաշնորհը չեն, դրանք հատուկ են նաև տարածաշրջանի այլ ժողովուրդների կանանց և արևելքցի կանանց առհասարակ: Նախկինում ավանդական համայնքում, հատկապես միայն եզդիներով բնակեցված գյուղերում եզդի երեխաների դաստիարակությանը բացի ծնողներից, բնականաբար, կարող էին մասնակցել տատը, պապը, հորեղբայրները, տոհմի այլ անդամներ, բայց միանշանակ ձևով չի կարելի պնդել, որ եզդիական ավանդույթը կանանց արգելում է նրանց զբաղվել իրենց երեխաների դաստիարակությամբ: Գաղտնիք չէ, որ ներկայում կան որոշ խնդրներ. օրինակ՝ կա եզդի աղջիկների վաղամուսնության և կրթությունը թերի թողնելու խնդիր, որն ունի նաև սոցիալական բաղադրիչ, և ամենևին չի կարող մեկնաբանվել կամ պատճառաբանվել միմիայն ավանդական եզդիական խիստ կանոնների առկայությամբ:

Աշխատանքում հանդիպում է հետևյալ միտքը. «Ըստ եզդիական ավանդական կենսաձևի՝ աղջիկը փողոց կարող է դուրս գալ միայն ավագ եղբոր կամ ընտանիքի մեծերից մեկի հետ» (էջ 114): Մեկ այլ տեղ ասվում է. «Լինելով անօգնական, չունենալով ձայնի իրավունք, գտնվելով անելանելի վիճակում՝ կինը իր փրկության միակ տարբերակը տեսնում է կրոնափոխության մեջ» (էջ 108): Հանդիպում է նաև նմանատիպ

պնդում. «Եզդի տղամարդիկ մեծամասամբ ցավոտ և բացասաբար են վերաբերվում կնոջ՝ աղջիկ երեխա ծնելու պարագայում: Նրանք նույնիսկ ապօրինի ճանապարհով ընդհատել են տալիս հղիությունը, որոշ տղամարդիկ էլ պայման են դնում կնոջ առաջ՝ ասելով, որ ամուսնությունը կօրինականացնեն, երբ կինը տղա երեխա ունենա: Կան նաև դեպքեր, երբ կինը երկու-երեք աղջիկ երեխա ունենալուց հետո՝ երեխաների հետ վտարվել է տնից: Եզդի տղամարդիկ, նման արարքից հետո, նրանց հետագա ճակատագրով չեն հետաքրքրվում և որևէ պարտավորություն չեն վերցնում իրենց վրա՝ նրանց գոյատևման և ապագայի հարցում»: (էջ 124) Վերոնշյալ պնդումները չեն կարող միանշանակ ճիշտ լինել, քանի որ այս երևույթները համատարած չեն եզդիական համայնքում: Կարծում եմ, որ պետք չէ որոշ ընտանիքներում կանանց հետ կոպիտ վերաբերվելու օրինակները ընդհանրացնել համայնքի բոլոր ընտանիքների համար: Բացի այդ, նշված օրինակները միանշանակ կերպով չեն կարող կրոնափոխության պատճառ լինել: Ընտանիքները տարբեր են, դավանափոխ լինելու պատճառները նույնպես, և պատճառներից մեկը հոգևոր հարցերի պատասխան չստանալն է: Գուցե նշված պնդումները եղել են բանասացների նշած պատճառաբանություններ, և ատենախոսը կարող էր նշել, որ այդ պատճառաբանությունները ներկայացվել են բանասացների կողմից:

Աշխատանքի բաժիններից մեկում կա այսպիսի միտք. «Բժշկական շատ խնդիրներ ավանդական եզդիների շրջանում շարունակում են մնալ դարերի խորքից եկող պատկերացումների ու հավատալիքների շրջանակում և պայմանավորում նաև նրանց «առողջապահական» վարքը ավանդական եզդիների պարագայում, եթե ամուսինները երեխա չեն ունենում, ապա չբերության համար մեղադրվում է միայն կինը: Ավանդական եզդիների մոտ չկա այնպիսի մշակույթ, որ ամուսինն էլ գնա բժշկի և հետազոտվի և խնդիր ունենալու դեպքում բուժվի: Նրանք մեղադրելով կնոջը չբերության մեջ՝ մեծամասամբ նրան տնից դուրս են անում»: (էջ 123) Այս պնդումը նույնպես միանշանակ ճիշտ չի կարող համարվել: Նման պնդում կատարելու դեպքում անհրաժեշտ էր ներկայացնել հիմնավորումներ կամ գոնե նշել աղբյուրը:

Ներածության մեջ ասվում է. «Վերջին տասնամյակներում եզդիներին առնչվող խնդիրներն առավել հաճախ են բարձրաձայնվում գիտական հետազոտություններում (Dalyan, Dogan 2013, 114-123. Grigoryan 2012. Фатеми 2018a, 111-115): Սակայն եզդիների կրոնափոխությունն առայժմ չի դարձել առանձին ուսումնասիրության առարկա, թեպետ կան սակավ հետազոտություններ այն կրոնափոխ եզդիների մասին, որոնք ընդունել են քրիստոնեություն և զրադաշտություն (Arakelova 2018, 353-365. Komakhidze 2019. Фатеми 2018a): Այս աշխատանքն արդի Հայաստանում եզդիների կրոնափոխության խնդրի հետազոտության առաջին փորձն է»: (էջ 3) Նյութը բացարձակ նորություն է և առաջին անգամ է դրվում գիտական շրջանառության մեջ (էջ 4): Հարկ է նշել, որ նյութը կամ հետազոտությունը բացարձակ նորություն չէ, այլ մի նոր գործ է, որ գալիս է լրացնելու և հարստացնելու մինչ այդ Հայաստանի եզդիների շրջանում կրոնափոխության երևույթի շուրջ կատարված հետազոտությունները (տե՛ս Փոլադյան Ա., Հայաստանի

եզդիադավանների շրջանում կրոնափոխության դեպքերի մասին // Հայաստանի կրոնները, 13.09.2012; Amryan T., "The Reasons of Proselytism among the Yezidis of Armenia" // Conference of Young Scientists; Ethnography, Archaeology, Folkloristics: Interdisciplinary Approaches, National Academy of Sciences RA, Institute of Archeology and Ethnography, Yerevan, 29-31 October, 2015; Amryan T., *Proselytism among Yezidis of Armenia*, Scientific Artsakh, №2(5), 2020, pp. 115-122): Ատենախոսությունից զատ այլ հեղինակների և ուսումնասիրողների կողմից եզդիների կրոնափոխության վերաբերյալ արված հետազոտությունները ամենևին չեն նսեմացնում տվյալ ատենախոսության կարևորությունը, ընդհակառակը դրանք կարող են շատ լավ փոխլրացնել իրար:

Աշխատանքը, որ կատարվել է բազմաթիվ մարտահրավերներ ու դժվարություններ հաղթահարելով և գիտական ձևաչափին հետևելով, ընթերցվում է մեծ հետաքրքրությամբ: Այս աշխատանքի ծնորհիվ բացահայտվում է ոչ միայն եզդիական համայնքում, այլև շատ այլ համայնքներում և հասարակություններում կրոնական տարբեր ուղղությունների քարոզչություն իրականացնելու մեթոդները, մարդկանց շրջանում արմատավորվելու և տարածում ստանալու ուղիները:

Ֆաթեմի Սեյեդեհնասիմ Սայեդմոջթաբայի «Նոր բողոքականության տարածումը Հայաստանի եզդիների շրջանում և ինքնության տրանսֆորմացիաները» խորագրով ատենախոսական աշխատանքը համապատասխանում է Է.00.04 «Ազգագրություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար անհրաժեշտ պահանջներին և ատենախոսը արժանի է իր հայցած գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Թ. Ի. Ամրյան

Ստորագրությունը հաստատում եմ

ԵՊՀ գիտական քարտուղար Լ. Ս. Հովսեփյան

26.10.2021